

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՅՈՒՊՆ ՄՈՎՍԻՍԻ

Ի ՆԱԽՆՈՒՄԵՆ ՀՌՁԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՀՐԱՇԻՑ

Ձի՛նչ է այդ՝ գոչեաց բարբառ Որ էին,
 Ի միջոյ բոցոյն ի Քորեբ լերին,
 Մինչ պատգամաւոր զճանրաղեզուն,
 Ուղղէր յԵգիպտոս՝ յազգին փրկութիւն,
 Ձի՛նչ է՝ հարցանէր՝ այդ ի քում ձեռին,
 Որ անկէզ այրէր զգլխար մորենին,
 Երբու թէ կարօտ էր պատասխանւոյն,
 Ու թտունամենի քաջիկ ծերունւոյն,
 Յուպ է, պատասխան ետ ի զարմացման,
 Որ բոկ կայր անդէն յերկրին սրբութեան,
 Ուր նախ մերձեալ էր անզգոյշ, կոշկօր,
 Չգեալ նորահրաշ տեսեամբ առ աջօր,
 Քառանկերորդ ա՛մ էր վաղ քաջ անցեալ,
 Ձի կրրէր զայն ջոխ շոր և ցամաքեալ,
 Եւ հօտից խաշանց Մագիանացւոյն,
 Նոյաւ զբրաւէր զաջող հովուութիւն,
 Գուցէ զայն միայն էր հանեալ ընդ իւր,
 Ի ամեն Քամայ մինչ բիրտ կշտամբիւր,
 Ո՞ կացոյց զքեզ դատաւոր, իշխան,
 Որ զԵգիպտացին եղբի ի կործան,
 Չայդ արս կրկնեաց Աչքն հրապից,
 Գործի անպատում անբաւ հրաշխց,
 Չորս կատարել՝ տան՝ ի ձեռս քօ,
 Թէ յաշքունի տան և թէ արտաքոյ,
 Մեք եմք Հայկազունքս նոր Երրայեցիք,
 Հարց մեր վերպակօք եղեալ ընկեցիկ,
 Ի նորօրինակ յատակ գերութեան,
 Ուսումնասեցիկ խոր տրգիտութեան,
 Իսկ Գու՛ նոր Մովսէս Հովիւ քաջարի,
 Որ կաս յանմատոց սրբութեան վայրի,
 Լուր զի՛նչ բարբառի նոյն ձայն բոցածին,
 Արդ անձնաւորեալ ի Բան Կուսածին,
 Թողի զի՛մ տեղին Քորեբ ի Մինայ,
 Միրեցի զԱզատ ծագ Արարատայ,
 Ուր յաւերժակէզ բոց իմ փորձութեան,
 Մշտավառ ցոյս ի տան Թորգոմեան,
 Անդ ծածկեաց զանձն իմ անուն իմ Որ էն,
 Աստ հռչակեցայ ծրնունդ ի Հօրէն,
 Անդ հուր և մրրիկ, սաստք փայլակնածին,
 Աստ Խորան լուսոյ հանգիստ իմ անձին,
 Ձի՛նչ է՝ զոր ունիս՝ յաջին քում կայեալ,
 Յուպ միսիթարէ՝ քեզ յինէն յանձնեալ,
 Չայդ պատուիրեմ՝ արդ արկանել ի կիր,
 Ի փրկել Մասեաց և՛ զազգ և՛ զերկիր,
 Աստուածամարտ իմ բրնիկ թշնամին,
 Չոր ի մահ հարի ի Քառաթևին,
 Օձակերպ ցափք զօրեաց հրապուրել,
 Ընդ Եգիպտոսի զԲարիկոն ընտրել:

Որտան ընդ զէ՛մ գերեաց քօ հօտին,
 Ի մշտամուսյլ ծրմակ խաւարչոյն,
 Խղի պղծթայս իմ ժողովրդեան,
 Տալ հայիլ տնչիւ ի լոյս կրթութեան,
 Ա՛յդ ի սեղան իմ զո՛հ ողջակիղի,
 Ի քէն հաշտարար պատարագ ուխտի,
 Շիջուցէ զայն բոց ինձ քարկութեան,
 Չոր ցարդ վառ պահեմ ի տան Թորգոմեան,

Հեղինակ Հրատեղայն Աւարդանայ Էն.

ՎԵՐՋԻՆ ՀՐԱՇՈՒՐԱԿԱՆ ՈՂՋՈՅՆ *)

ԻՄ ՍԻՐԵՆԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ.

Նայեցէք վերջին օրիս, որ ես եմ այս տեղ ստար,
 Մահուն ցար ջանս բռնեց, եղիւ եմ աստիկ անձար,
 Կտրուեց իմ գորութիւն, տանջվում եմ ես շարաշար,
 Յոյսս զբած դէպ ի Աստուած, որ նա լինի ինձ հոգատար:

Մերկիք, լաւ իմացէք, որ ճանաչար՝ պէտք է գնամ,
 Գիտում եմ որ շատերից, ախ, փափազով պէտք է մնամ.
 Անժամանակ մահուան ձեռքով, կենաց ծառոյս կտրեմ,
 Չրկվում եմ Ձեր տեղիցն, ես տեղից կ՛հեռանամ:

Ծնողացս կարօտները, սրտիս միջում վառվում է,
 Բոյրերիս և եղբորս սերները, ո՞ն, ինձ տանում է,
 Երկնային հրեշտակն ա՛հա կանգնած տանում է,
 Ախ, թողում եմ գառնուկ զաւակս, որ յետուցս ձայնում է:

Մի գեղեցիկ այգւոյ միջին, ես էի մի ծառ բանաւոր,
 Կանանչացած մի հաս պողով, ուրախ էի փռատար,
 Մահուան քամին ծառիս դիպաւ, ախ, ինչքան եմ մեղաւոր,
 Չորացնում է ինձ արմատից, Ձեզ թողու վիշտ բերաւոր:

Գիշեր ցերեկ աշխատելով մի բարի անուան համար,
 Ամենի հետ շատ խոնարհ, յոյս ունէի մնալ երկրոր,
 Մահուան սուրն է սրտիս առեւ, ես լինում եմ ինչպէս մի քար
 Հրատարում են միակ որդւոյս, և տանում են վերին տանար

Վայելութիւն աշխարհիս դէպ գերեզման է վազում,
 Բոյր աչնիս փառքերը ի հող տապան է մտնում.
 Ամպն ծածկեց արեգակս, ա՛հա երկինքս է մթնում,
 Նոր բացուած լոյս արեւս իւր լուսիցն է խաւարվում:

Ես թողում եմ ինձ յիշատակ, միակ գառնուկ զաւակս,
 Խոնարհ սերս հարսնութեան և իմ նոր հասակս,
 Պահէք սիրով կոկամ վարդս և պատուական լուսնեակս.
 Հրամանաւ Աստուծոյ կարճանում է ժամանակս:

Մնաց բարեաւ իմ բարեբառք, ես շատ գո՛հ եմ Ձեզանից.
 Ընդունեցէք վերջին ողջոյնս բաժանվում եմ աշխարհից.
 Աչնի ծնողք և քյոյրեր, միակ եղբայր անձկալից,
 Ձեր աղօթք և ողբերկն չկտրէք Ծովինարից:

(*) Ի բերանոյ պարկեշտափայլ հունգուցեալ աղբը-
 ւածունոյ Ծովինարայ Շտապս Կուպիտան Աւարիբե-
 գիան, որ էր հարս Պ. Մկրտչի Թորոսեան Երեսուն-
 ցուղ, որը որ ինքն իսկ իւր հիւանդութեան ժամա-
 նակը գրել է. խիստ սրտաշարժ զգուցմամբք, ի 14
 Նոյ. 1874 ի, եւ կարդացուեց ի Քաղմանն: